

06.11.2014 06:43



Հարգելի՛ փաստաբաններ,
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և «Պապուլեքս» փաստաբանական գրասենյակը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացնում են «Վանաձորի իրավաբանական կլինիկա» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվելու է ռազմավարական նշանակություն ունեցող 6 գործ, որոնք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանը: Ծրագրի խնդիրներն են բացահայտել մարդու իրավունքների խախտման դեպքերը պետության վերահսկողության ներքո գտնվող հաստատություններում՝ վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի (ընթացակարգային դեպքերը, որոնք վերաբերվում են խոշտանգումներից զերծ մնալու իրավունքին), կյանքի իրավունքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի և այլ իրավունքների խախտման դեպքում, և ռազմավարական դատավարության միջոցով հասնել խախտված իրավունքների վերականգման և իրավիճակի փոփոխության: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59)՝ զանգահարելով ծրագրի համակարգող Անի Չատինյանին 093819275 հեռախոսահամարով: Լրացված հայտերը պետք է ուղարկել achatinyan@hcav.am էլեկտրոնային հասցեին: Կից ներկայացվում է հայտի ձևը:

ԲԵՌՆԵԼ ՀԱՅՏԸ